ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2026 թվականի N 0242-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ մասերով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 09.02.2026 թվականի թիվ 15-Ա որոշումը՝**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման նպատակով Վարդենիս համայնքի տարածքում քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առաձնացնել անվճար վահանակներ՝ համաձայն հավելվածի:

2 . Ընդունել ի գիտություն, որ ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու վահանակները հատկացվում են հավասար հնարավորության (հավասար մակերես) սկզբունքով:

3.Սույն որոշմամբ սահմանված քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առաձնացված անվճար վահանակների վերաբերյալ առաջացած հարցերը լուծելու համար պատասխանատու նշանակել՝ Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների, զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Ոսկանյանին /հեռախոսահամար՝ +374 94535404/:

4.Սույն որոշումն ուղարկել ՀՀ Կետրոնական ընտրական հանձնաժողով և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. ապրիլի 23
ք. Վարդենիս